ՍԵՎ ԽՈՌՈՉՆԵՐ

Տիեզերքի ամենահանելուկային և արտառոց օբյեկտները **սև խոռոչներն են**:



Սև խոռոչը տարածության այնպիսի տիրույթ է, որտեղ տիեզերական ձգողությունն այնքան ուժեղ է, որ այն լքելու համար այդ տիրույթի մարմինների արագությունները պետք է գերազանցեն վակուումում լույսի արագությունը՝ $c = 300\,000$ կմ/վ: Այսինքն՝ սև խոռոչից ոչինչ չի կարող դուրս գալ՝ ո՛չ ճառագայթում, ո՛չ էլ մասնիկներ, քանի որ բնության մեջ ոչինչ չի կարող շարժվել լույսի արագությունից մեծ արագությամբ: Սև խոռոչները կարելի է հայտնաբերել կրկնակի աստղային համակարգերում՝ դիտելով տեսանելի աստղի նյութի արտահոսքը դեպի անտեսանելի սև խոռոչը (նկար):